

ստուգեալ հաստատեաց⁶ ի միտս իւր⁷, եթէ⁸ սակաւաձեռն գնդաւ⁹ գայ սպարապետն¹⁰ Յայոց¹¹ ի վերայ նորա, ոչ եկաց մնաց ի կողմանս¹² ճորայ¹³, այլ կուտեաց զամենայն¹⁴ բազմութիւն զաւրու իւրոյ¹⁵, եւ փութանակի անցաներ¹⁶ ընդ մեծ գետն Կուր անուն¹⁷, եւ պատահեր նմա¹⁸ մերձ ի սահմանս Վրաց հանդէպ¹⁹ խաղխաղ²⁰ քաղաքի, որ ձմերոց էր²¹ թագաւորացն Աղուանից: 179 Անցաներ բաւանդակեր²² ամենայն զաւրաւք²³ իւրովք. ռազմ արարեալ զբոլոր²⁴ մեծութիւն դաշտին ի ներքս փակեր. 25 զինեալք եւ վառեալք ամենայն պատրաստութեամբ ի մարտ պատերազմի ընդդէմ գնդին Յայոց²⁶ Իսկ քաջն Վարդան եւ ամենայն զաւրքն, որ ընդ նմա էին²⁷, իբրեւ տեսին²⁸ 29 զբազմութիւն պատրաստութեան³⁰ գնդին հեթանոսաց, հայեցան եւ յիւրեանց³¹ սակաւութիւնն³². թէպէտ եւ կարի³³ յոյժ նուազունք³⁴ էին քան

1 ԵԸԺԽԿԳ իսկ նա իբրեւ գայս ամենայն քաջալերս լուաւ ի Վասակայ Գ իբրեւ գայս ամենայն լուաւ

2 Դ գայն

3 ԳԴԼ չիք ամենայն

4 ԲԴ քաջալերս Կ չիք քաջալերս

5 Թ չիք ի

6 ԲԴԼՏ՝Տ՝ զհտաց լիս հաստատեաց

7 Ի չիք իւր

8 ԳԵԸԺԽԿ թէ

9 ԴԾ գնդիւ

10 Բ ասպարապետն

11 Բ չիք Յայոց

12 ԵԸԺԽԳՏ՝ ի սահմանս լիս ի կողմանս

13 Է ճորոց

14 Բ զբազմութիւն զօրացն լիս բազմութիւն զօրու իւրոյ Դ զօրացն: չիք իւրոյ

15 Թ զօրաց իւրոց

16 Բ անցանել

17 ԲԴ չիք անուն

18 Խ պատահեր նոցա

19 Թ չիք հանդէպ

20 ԲԳ խաղաղ

21 ԱԸԷԻՎ թագաւորաց ԳԵԸԺԼԽԿԳՏ՝ թագաւորութեանն Աղուանից

22 ԲԴՏ՝ բովանդակ ԳԵԸԺԼԽԿԳՏ՝ բովանդակեր ԱԸԷԹԻՎՏ՝ Ա բաւանդակեր

23 ԲԳԴԵԸԺԽԿ զօրօքն

24 ԲԴ դաշտին մեծութիւնն ի ներքս փակեալ

25 ԲՏ՝ զինեալ եւ վառեալ ԼՏ՝ չիք եւ վառեալք

26 ԲԴՏ՝ Վարդանայ լիս Յայոց

27 ԲԴ չիք էին

28 Ի չիք տեսին

29 Դ զպատրաստութիւն բազմութեանն

30 ԲԴ չիք գնդին հեթանոսաց

31 ԹԻ իւրեանց

32 Ե սակաւութիւն

33 ԲԴ չիք կարի

34 ԲԳԴԵԿ նուազք Ը նուազ ԺԼԽԳՏ՝ նուազ